69. ԱԺԴԱՀԱԿԸ

Ինում ա, ինում չի մին կնեգյ, մին մարթ ա ինում։ Էս կնեգյ նան մարթը մինը մինու նհետ փրսակվում ըն։

Շատ տարե յա ընցնըմ, էս կնգան նան մարթեն խոխա չի ինում։ Վերչը շատ վախտ ա ընցնըմ, տահանց մին խոխա յա ինըմ։ Էն էլ մին տղա խոխա։ Հնգեր, հրեան, պարիկամնի, ծանոթնի, հրվաքվում ըն, վեր ըշկըլոնսիքյ տան էտ կնգան նան մարթին։

Կյուվուղնեն հի՞նչ ըն տեսնըմ, վեչ թա խոխա յա, լափ մին պատիժ, հրաշկ պեն, վեր ինդի պեն հալա ուրանց օրումը էն ա վեր տեսնըմ ըն։ Կյուվուղնեն՝ հնգեր հրեան, պարիկամ, ծանոթ, քշըռում ըն, տեսնըմ խոխան հենգյ փութանոց ա։

Տատմարրն ասըմ ա. — Ստի խոխա հալա ես տեսալ չը՞մ։ Էս ա հարուր քռասուն տարե յա, վեր տրտմրրոթուն ըմ անըմ, հալա յրես մորան իլած սրհաթաս չուրու մրհենգյ հենգյ փութանոց խոխա չըմ տեսա՞լ։ Ըստրան անըմը ռեդմա մին հենց անըմ տինինքյ, վեր իստի պատիժ պեն ա, վերչումը ստրանա լավ տղամարթ տուս կրկյա։

Ստի պենի ըշկըլոնսիքյ կյուվուղնեն ըրմանում ըն։ Սահանց նհետ մին մեծ պառավ մարթ ա ինում, Սամսոն ընումավ։

Սամսոնըն ասըմ ա. — Ա՛ ժողովուրթ, յրես իմ օրումրս ստի պեն տեսալ չըմ, ամմա ճարրն էս ա, վեր սա հիրը օղում ա ինի՞, վերչումը ածդահա յա տուս կյըլական, յրես ըտրա անումը տնում ըմ Աժդահակ։

Կյուվուղներան մին օրիշըն ասըմ ա.— Պա վեր Թմամեն հենգյ փութանոց մին խոխա յա իլալ, կաթն ա՞ իննական՞, վեր ծեծ տա։

Թամամ բաջին ասըմ ա. — Իմ տոնըս, տեղըս մատաղ իմ բլես, վեր աշկես սըվը-սիտտակն ա։ Վեչ թա՞ մինակ ծեծըս, իմ ջանըս էլ ա մատաղ, թաքյ կենա, խոխաս մըծանա։

Թմամեն հետե շատ տիժեր ար։ Ինքյը միչև խոխան պիրիլը ըշխըդելիս ա իլալ հարուստ Միրզին հետե։

Իրեք օրանը ետը Միրզան ծեն ա տամ Թմամեն նան Թմամեն մարթեն, վեր քյինան ըշխաղին. Թամամը քըղըհան անե, ուրան մարթըն էլ վըղասլեն անե ուրան մհար։ Ստի տնչվիլավ, չըրչըրվիլավ Թամամ բաջին շելակն կասում Աժդահակեն, քյրնամ քըղըհան, կյամ։ Մին թահրավ Աժդահակին պահում ա, մծըցնըմ։

Էտ վախտը շկոլումը կընգ-կընգ հարուստներեն խոխենքյըն ին թողում կարթին, մին պեն գյիդան։

Խեղճ Թամամ բաջուն խոխան թողում չըն կարթի։

Ասըմ ըն. — Հալա ծըծա ետ չըս ըրալ։

Հարուստնեն ստի մհանա փռնելավ, թողում չըն, թա՞ խեղճ քյասիր Թամամ բաջուն տղա Աժդահակը կարթի։

Աժդահակը քառասուն տարի ծեծ կերավ, քառասուն տարանը ետը Թամամ բաջին ծըծա ետ ըրավ, տվավ շկոլ, վեր կյիրըճանանչ տեռնա։

Աժդահակը նի մտավ շկոլ, ըշտեղ սվերըմ ին դովլաթատարերեն, հարուստներեն խոխենքյը։

Մունթերը տնազ ին անում, ասում, թա՞. — Համութ չի՞, վեր քառասուն տրեկան, եկալ ըս մինինջի մունթը տեռալ, օխտը արեկան, օթ տրեկան խըխոցու հնդյեր ընգա՞լ։

Էսքան տնազանը ետը Աժդահակը կյամ ա ուրան ապորը կոշտը, ասըմ. — Ա՛պա, խոխենքյը, էն շկոլեն մունթերը ինձ տնազ ըն անըմ, թա՞ խե՞ եկալ ըս օխտը-օթ տրեկան խըխոցու հնդյեր տեռալ։

Հարրն ասըմ ա. — Բալա, ապան քե մատա՞ղ, նահանք հի՞նչ մունթեր ըն, հի՞նչ խոխեքյ ըն, վեր քյըեզ տնազ ըն անըմ։ Հու վեր քյըեզ տնազ անե՞, մին սիլլա՞ տո ուրխեն, էլ տնազ չանել։

Էքյսը քյունում ա շկոլ, էտ խըխոցան մին քանե հոքյի տնազ ըն անըմ։ Վեր տնազ ըն անըմ, Աժդահակը սիլլա՞ յա տամ, տահանց կլոխնեն պուք ա կյամ։ Ստի մին քանե մունթու կլոխ պուք ա տամ, մինակ մեհեռ սիլլա՞ տալավ։ Ծեն ըն տամ քյուխվեն։

Քյոխվան կյամ ա, թա՞ փըռնե Աժդահակեն, թա՞. — Խե՞ խըխոցու թխալ ըս, սպանա՞լ։

Աժդահակը թխում ա, քյուխվեն կլոխը էլ պուք տամ։ Ծեն ըն տամ պրիստավեն, գարադավոյեն, դըրղեն, վեր մին ճար անին, էլ քյոխվա չի թողալ, էլ հարուստու մունթ չի թողա՞լ, էլ դարղա չի թողալ, լոխճին կտորալ ա՞։

Պրիստավը օղում ա մին հնար քթենա, առանց Աժդահակեն նհետը խուսելու, ընդրա կլոխը բադու տա։

Նի յա մընընըմ շկափին մեչը ծեն տամ, կակուղ լուղվավ ասըմ. — Է՞յ, քյըեղ ղարկինքյ քյընա՞ ծմական միկա փա՞դ, ճեխ պեր բա՞քմա՞ղ իփիլի հետե։

Պրիստավը օղում ա, վեր ղարկի մին հանց ծմակ, վեր ասլաննեն օտին, թողին վեչ, թա՞ սաղ-սըլըմաթ կյա տոն։

Պուրում ըն մին ըրրա, մին ճոխտ կյումա՞ղ տամ, վեչ ցակատ ըն տամ, վեչ կացեն։ Աժդահակը ըրրան լծըմ ա, քյընա՞մ։

Շատ ա քյընա՞մ, խրեդյ ա քյընա՞մ, հսնում ա մին քաղաք, անըմը Շուշի։ Էտ քաղաքան անց ա կենըմ, հըսնըմ մին ծմակ։ Էտ ծմակը մին հանց ծմակ ա ինում, վեր ընդեղ քյընողը էլ ետ չի կյամ։ Հինչ մարթ քյընամ ա, ըսլըննեն օտում ըն։

Էս Աժդահակը քյընա՞մ ա էտ ծմակը, ըրրան ըտեղ տո՞ւս ա օնում, պըրծընում, սկսում ա փա՞դ անելը, էն էլ ծեռքավ։ Քառասուն-իցծուն կյեղ հաստ փըդերեն ծեռքավ շըրըմփըցընում ա, կյերանկյերան փա՞դերը նի տամ ըրրան, կպոտում, պրծընում, ինքյը քոն ինըմ։ Հենդյ քշեր-ցիրեկ քոն ա ինըմ։ Զուրթնա՞նըմ չի։ Սաղ ժողովուրթը գյուդա՞ում ըն, թա՞ ըսլըննեն կերալ ըն։ Հենդյ օրանը ետ Աժդահակը քունա զըրթնա՞նում ա, տեսնըմ կյումա՞ղ չիկա։ Կյումըշներեն ըսլըննեն կերալ ըն, ծմակումը մին թալա տեղ նստոտալ։ Էս Աժդահակը ըսլըններեն փըռնոտում ա, ըրրան լծըմ, պիրում քաղաքը։ Ժողովուրթը զրմանում ա, վեր Աժդահակը ըսլըննուն պերալ ա քաղաք։ Էս պենը տարածվում ա սաղ ըշխարքումըս։ Սա թողինքյ ըստեղ, խոսինք պրիստավան։

Պրիստավը տեսնում ա, վեր Աժդահակը էլհա ծմական ետ ա եկալ, էլ օրիշ հնար չի քթենում ընդրան պըտժելի։ Պրիստավը վերչումը կյամ ա էն մթկեն, վեր կարքադրե Թամամ բաշուն, վեր Աժդահակեն փսակե։

Տա կանչըմ ա, ասըմ.—Թա՛մամ, հե՞ Թա՛մամ, տու օղում ըս աշխարքըս քանդի՞ս, խե՞ աղետ փսակում չը՞ս, վեր մին խելքու կյա, էլ քյոխվա չի մնաց, էլ հարուստ չի մնաց, էլ դարղա չի մնաց, ախեր լոխճին էլ կտորի՞ց։

Թամամ բաշին քյինա՞մ ա պրիստավին կոշտը, ասըմ. — Պրիս-

տավ ուղա, յրես հո՞ւնց անիմ է՞, մին պառավ կնեգյ ըմ, յրես էլ էտ ըմ օղում, վեր իմ խոխաս փսակվե, ինձ պահող չիկա՞։

Թամամ բաջին կանչում ա ուրան Աժդահակեն ասում. — Բալաս, մաման քե մատաղ, պա յրես պռավալ ըմ, քու հաբ պռավալ ա, մրեղ պահող չիկա, պեր քյրեղ փսակինքյ, քյրեղ մրհար մին ախճիղյ օղիմ, վեր ինձ պահե։

Ինդամա ասիմ, վեր Աժդահակը մին շատ պարի մարթ ար դրի ուրան հաբը, մարը, ծընողներեն սիրում ար։

Ասում ա. — Ա՛ մար, բա տու խե՞ բիդիս ինձ փսակիլ, յրես ինքյս ինձ լավ կըփսակիմ։

Էս խոսկերքըն ասում ա, պըրծնում, քյընամ մին ըրկաթե քսան փութանոց մհակ զակազ տամ, մին գորգա, վեր պրուժինավեր ա ընում, հիշքան պեց ա թողում, էնքան էլ էրկընանում ա։ Մին էլ զակազ ա տամ մին քյանդիր, հենդյ հարուր մետր էրկընոթունավ։ Յոր ա օնում էս կործիքնեն, ճընապա ընգնըմ, քյընամ, վեր ախճիգյ օղի։

Շատ ա քյինամ, խրեգյ ա քյինամ, ախրը տուս ա կյամ հղեն քյինամ։ Տեսնըմ ա մին մարթ էնքան հունարռու, վեր ղենդյնավ փոկ ա քաշում։

Աժդահակն ասում ա. — Ա՛խպեր տղա, էտ հի՞նչ մեծ հունար օնիս, վեր ղենդյավրտ փոկ ըս քաշում։

— Պա տու էտ ը՞ս ասում, ախպեր տղա, Աժդահակը ըսլընեն պերալ ա քաղաք։

— Էտ լա՞ յրես ըմ, մին չինինքյ, էրկու ինինքյ, քյընանք ախճիգյ օղիլ։

Էս էրկուսավ քյինամ ըն։ Շատ ըն քյինամ, խրեգյ ըն քյինամ, մին էլ տեսնում ըն մին մարթ հղեցը ղրաղեն նստած, կյումաշու կաշվա, էն էլ էն թահրը կաշվա, հստոթունը տասը սանդիմետր, տրեխ ա անում։

Աժդահակը ուրան հնգյերավը պարով ա տամ, ասում.— Ա՛յ մարթ, հի՞նչ մեծ հունար օնիս, վեր առանց բիզ, առանց տենակ, տրեխ ըս անում էտ թահրի կաշվա։

— Տու էտ ը՞ս ասում, ախպեր տղա, Աժդահակը ըսլընեն պերալ ա քաղաք։

— Էտ հենց յրես ըմ,— բաղասխանում ա Աժդահակը.— էրկու չինինքյ, իրեք ինինքյ, քյինանք, ախճիգյ օղինքյ։

Իրեքավ շատ ըն քյինամ, խրեգյ ըն քյինամ, մին էլ տեսնըմ ըն

մին մարթ հըղըցավը փախճում ա, մին ճղացու քար մին վեննը քցա̈ծ, մինն էլ էն մին վեննը քցա̈ծ։

Հետան ծեն ըն տամ. — Արա հե՛յ, էտ հո՞ւ վը՛ս, թո՞րըն ը՞ս փախչում, վեննը կա՛ց, տեսնանք հի՞նչ մարթ ըս, վեր իտի ա̈ժ-դա̈հա̈ յըս։

Մարթը վենն ա կենում, բաղասխանում.— Արա՛, պա տու էտ ը՞ս ասում, Աժդահակը ըսլըննեն պերալ ա քաղաք։

— Էտ հենց յըես ըմ,— բաղասխանում ա Աժդահակը,— իրեք չինինքյ չորս ինինքյ, քյընա̈նքյ ախճիգյ օղինքյ։

Ջորսավ շատ ըն քյինա̈մ, խրեգյ ըն քյինա̈մ, մին էլ ըն տեսնում մին մարթ նստած հըղըցեն ղրաղեն, Մռավ սարեն նման մին սար մին ծեռքեն, Քյիրս սարեն նման մին սար էլ էն մին ծեռքեն դյըրվանքեքյ ա շինում։

— Էտ հի՞նչ ըս շինում.— հըրցընում ըն ընգրանա։

— Գյըրվանքեքյ ըմ շինում, մինը մին խրեգյ պակաս ա։

— Էտ հի՞նչ օժավ ըս, վեր էտ հսկա սըրերան գյըրվանքյա յըս շինում։

— Պա, տու է՞տ ըս ասում, ախպեր տղա, Աժդահակը ըսլըննեն պերալ ա քաղաք։

Աժդահակըն ասըմ ա. — Էտ հենց յըես ըմ, չորս չինինքյ, հենգյ ինինքյ, քյինա̈նք ախճիգյ օղինքյ։

Հենգյ ա̈ժդա̈հա շատ ըն քյինա̈մ, խրեգյ ըն քյընա̈մ, քառասուն սուլթկա հղե յըն քյինա̈մ։ Տրանց մեծը Աժդահակն ա ինում։ Սրանք հենգյ հոքի, էնքան քյինա̈մ ըն, հըսնում ըն մին տեղ, եշըմ ըն, տեսնում, մին երգյիր, վեչ մարթ կա, վեչ սա̈ս-սեմուր, մինա̈կ շատ հեռե ըրվամ ա մին պուլուր սիպտա̈կ պեն, տափեն վեր ընգած։ Էտ պուլլուր պենը շատ պիծի յա ըրվամ։ Քանե քյինա̈մ ըն, էնքան մոտունալավ էն սիպտա̈կ պենը մըծանում ա։ Քառասուն սուլթկա քյինա̈լա̈նը ետը հըսնում ըն էն սիպտա̈կ պենին կոշտը, տեսնում հի՛նչ, մին կալի չանք պուլլուր քար, վեր ընգած։ Տեսնըմ ըն էս քարեն մեշ տեղան ծակ ա, էն ծական քըլքըլալի ծոխ ա տուս կյամ։

Էս հենգյ ա̈ժդա̈հեքյը, մնամ ըն մա̈թա̈լ, ցմաքված.

— Բա էս հի՞նչ պեն կինի, քընենքյ ըն անըմ, մին-մին եշում, վեչ մին պեն կարում չըն գյիդա̈ն, ճոկին, թա̈ ստեղ հի՞նչ կինի՛։

Ստահանք լոխ եշում ըն Աժդահակին, թա̈ տեսնան նա հի՞նչ կասե։

Աժդահակըն ասում ա. — Տղեք, ծըեզ տեսնամ, ղուվաթավ էս քարը բեդմա յոր օնինքյ, տեսնանք ըստրա տակեն հի՞նչ կա։

Զորս ղվաթլու աժդահքը մնամ ըն մաթալ, օղում ա թա սահանց լղեն ճաքե, սահանց սըրտերնին օղում ա, թա ընգնե հեռե տեղ Աժդահակեն էս խոսկերքեն յրան։

Մնամ ըն մըտրծելիս, թա հո՞ւ կըկարե էս ղրեռ քարը պիցիրցնե։ Ախրը շատ ըն մաթալ մնում, խրեգյ ըն մաթալ մնում, տեսնում ըն մին խրեգյ ուրանց անտ հեռե վրինի քռասուն կյումաշ ա ըրվամ։ Սահանք փռնստում ըն էս քռասուն կյումաշին կտորում, օտում։ Էտքան մեսը մին սհաթումը օտում ըն, ուժուվանում։

Աժդահակըն ինքյը ուրան ասում ա. «Հարկավեր ա սահանց լոխճին օժը փորցած ճոկ-ճոկ»։

Պուրում ա ուրան էն սուվթա հունարռու հնգյերը, վեր առանց տենակ, առանց մին պեն, ղեյնավը փոկ էր քաշում, ասում. — Ախպեր փոկ քաշող, մին էս քարըս պըցըրցրու, տեսնանք ըստրա տակեն հի՞նչ կա։

Փոկ քաշող աժդահան փորցում ա, կարըմ չի էս քարը պըցըրցընե։

Երկուինշի հնգյերին էլ ա ասըմ, էն էլ չի կարըմ պըցըրցնե։ Իրեքինշինը՝ ճղացեն քարերը վեննները քցող աժդահան էլ չի կարում պըցըրցընե։

Զորսինշի՝ սարերը գլըրվանքյա շինող աժդահեն էլ ա ասում. — Ախպե՛ր տղա՜, էս քարը մին հանց եր կալ շպրտե, վեր էլ ըտեղեքյ ըրվա վուչ։

Սա էլ փորցում ա, մին խրեգյ տեղան տուրուր ա տամ քարը, էլհա կարըմ չի պըցըրցնե։ Հերթը հըսնում ա ուրան, քառասուն տարե ծեծ օտող, հարուստներեն մին սիլլավ կտորող, ըսլըննեն քաղաքը պիրող Աժդահակեն։

Էս մարթը էն ջուռա աժդահա ար, վեր մին դռնում նափասը քաշից րիդի փորը, մին ծեռքըն էլ տիրավ քարեն տակեն, միչև նափասը տուս ածելը, էս քարը մին ծեռքավ հանց թող ըրավ, վեր էս քարը ուրանց անա քռասուն վերստ հեռե ընգավ։ Հի՞նչ ըն տեսնում, տեսնում ըն մին վեր, մաշան ծոխ ա տուս կյամ։ Էս վերեն ծակը շատ ա սահանց ղըրմըցնում։

Աժդահակըն ասում ա. — Բեդմա նի մըննինքյ էս վերը, տեսնանք տափեն տակեն հի՞նչ կա, վեր ստի ծոխ ա տուս կյամ։

Զորս աժդահեքյը էլհա վախըմ ըն։ Հի՞նչ անին, բեդմա Աժդահակեն ասածը կդարին։ Էլհա ընդի, հունցու վեր քարեն յրա յա սահանց օժը փորցալ, օղում ա ստեղ էլ փորցի։

Պիրում ըն փոկ քաշող հունարռուվեն կըռնըտրկերան կապում,

քյինդիրավ կախ տամ էս վերեն մաշընըվեր։ Տա պատառ թըքանըմ ա, վեր քյինա̈մ ա փոսեն մաշընըվեր, սկսում ա ճըղճըղալը. — Վա՜յ էրից, վա՜յ էրից, վա՜յ էրից։

Էս խոսկերեն դա̈ռդա̈ն ըստրան տո̆ւս ըն օնում։ Պիրում ըն էրկունջինը կախ տամ՝ տրեխ քաշող ա̈ժդա̈հեն, վեր քյընա տեսնա տափեն տակեն հի՞նչ կա։

Շատ ա քյինա̈մ, խրեգյ ա քյինա̈մ, մին էլ ըն տեսնում էլհա ճղղաց. — Վա՜յ էրից, վա՜յ էրից, վայ՜ էրից։

Ըստրան էլ ըն տո̆ւս օնում։ Ծղացեն քարերը վըենները քըցող ա̈ժդա̈հեն ըն կախ տամ, սա էլ նահանց նման կարում չի քյինա̈, էլհա տո̆ւս ըն օնում։ Հերթը հըսնում ա սարերը գյըրվանքյա շինողեն։ Ըստրան էլ ըն կախ տամ, սա էլ չի կարում տիմա̈նա̈, շատ ա ճըղճըղամ.

— Վա՜յ էրից, վա՜յ էրից, վա՜յ էրից, էլհա տո̆ւս ըն օնում։

Հերթը կյամ ա հսկա ա̈ժդա̈հա Աժդահակեն։

Էս մարթը ո̆ւրա̈ն հնգյերունցը ասում ա. — Իմ կռնըտըկերաս կապեցեքյ, կախ տվեքյ, հիշքան ասիմ. «Վա՜յ էրից, վա՜յ էրից», ինձ տո̆ւս չօնիքյ, կախ տվեք քյինա̈մ, մին տեսնամ վըեղեն տակեն էս հի՞նչ երգյիր ա, վեր ըստի ծոխ ա տո̆ւս կյամ։

Աժդահակը յոր ա օնում ո̆ւրա̈ն քսան փութանոց ըրկաթե մհակը, գյորդա̈ն, կախ ընգնո̆ւմ, քյինա̈մ։

Շատ ա քյինա̈մ, խրեգյ ա քյինա̈մ, հըսնում ա տափեն տակեն մին երգյիր, տեսնում ինքյը վեննը կացած ա վեց տռան ըռաշկե։ Աժդա̈հակը քընենքյ ա անըմ, թա̈. «Ցըես հի՞նչ անիմ, հո՞ւնց անիմ, վեր նի մըննիմ էս տռները, տեսնամ ըստեղ հի՞նչ կա»։

Աժդահակեն հնգյերունքը հա̈լա̈ եշըմ ըն, տեսնան, թա̈ էն հի՞նչ խա̈րա̈ր ա պերում։

Առաչին տըռնավը նի յա մըննում, տեսնում մին զարմանալի պեն։ Մին օշափ կլո̆խը տիրած մին պառավ կնգա ծընգան, օխտը օրվան քոն նի մտած, մին ղոլեն էլ ստոլեն յրան մին սերուն ախճիգյ։

Աժդահակը ինքյըն ո̆ւրա̈ն ասըմ ա. «Մունք հենց ախճիգյ օզելի յընք եկալ, էս լա̈վ տեռավ»։ Էտ դա̈ըըմը տեսնում ա պատան կախ տված գյիրին յըրա կյիրած քյոհնա̈ հայ լո̆ւզվավ, վեր էտ սերուն ախճիգյը մեծն ա՝ ո̆ւրա̈նց քղաքումը, հորը պըլըտներան մին օթախըմ նստած, օշափըն էլ ո̆ւրա̈ն պառավ կընգանավը ընդըրա յրան պահակ ա տիրա̈ծ։

Աժդահակը սաղ ա անում ո̆ւրա̈ն քսան փութանոց մհակը, վեր օշափեն կլխեն թխե, սըտկըցնե։

Պառավը Աժդահակեն ասում ա. — Ա՛յ աստուծու ղոնաղ, տու հիշտեղա՞ն ըս ընդալ ըստեղ, սուսըփուս տո̈ւս եք, թա̈ չէ օշափը եր ա կըննական քյըրեղ մեհետան կոլ տա, քյըրեղ մըեհման անե։

Աժդահակը եշից վուշ պռավեն խոսկերեն, հանից քսան փութանոց մհակը, մին հետ ինդի շըրրիկցըրավ, օշափեն կլխեն, վեր սաղ պատառը մնաց կեռեքյը։ Պըլատեն պռավեն էլ սպանից, ախճիգյը տո̈ւս կալավ էն ծակսեն ռեխը, հիշտեղ չորս ա̈ժդա̈հեքյը քյա̈նդիրը կախ ըրած պահում ըն, թա̈ տեսնան Աժդահակը հի՞նչ ա ասըմ ո̈ւրա̈նց։

Սերուն ախճիգյը թողում ա ըտեղ, էրկունջի տո̈ռնըն ա օղում պեց անի տեսնա ըտեղ հի՞նչ կա։ Թըխում ա, տո̈ռնը կոտրում, նի մըննում պալատը, տեսնում ընդրա նման մին սերուն ախճիգյ, ամմա օշափը իրեք օր ա մնացալ, վեր քոմուտեղա եր կենա։

Պառավ պըլըտականը նստած ա օշափեն կոխկեն, վըխցընում ա Աժդահակեն, թա̈. — Օշափը էս սհաթեն եր ա կըննական, քյըրեղ կոլ տա։

Աժդահակը վախըմ չի։ Թըխում ա։ Մին թխելավը սպանում օշափեն, պըլըտական պռավեն։ Սերուն ըխճըկանը տուս օնում, պո̈ւրո̈ւմ առաջին ըխճըկանը կոշտը, վըխցընում ա, վեր միչև ո̈ւրա̈ն կյալը վեչ մինը տեղան տուրո̈ւր չի կյա։

Ետնան նի յա մըննում իրեքինջի տո̈ռնը։ էլհա ինդի տեսնում ա նահանց անա մին սերուն ախճիգյ։ Իրեքինջի օշափը քոն իլա̈ծ, խրեգյ ա մնացալ, վեր եր կենա, պառավն էլ կոխկեն, վըխցընում ա Աժդահակեն։

Աժդահակը եշում չի, ըստկըցնում ա օշափեն էլ, պռավեն էլ։ Սերուն ախճիգյը պո̈ւրո̈ւմ էն էրկու ըխճըկանը կոշտը։

Աժդահակը չորսինջի տռնավը նի յա մննում, տեսնըմ էլհա մին սերուն ախճիգյ։ էլհա մին օշափ քոն, մին պառավ քըշտեն։ էտ ըխճըկանը դա̈ռդա̈ն կտորում ա էտ օշափեն էլ, պռավեն էլ, ախճիգյը էլհա պո̈ւրո̈ւմ էն իրեք ըխճըկանը կոշտը։

Աժդահակը նի յա մըննում հենգյինջի օթախը, ըստեղ մին ախճիգյ ա տեսնըմ։ էս ախճիգյը լո̈ւսնինգյին տեղը իշեղ ա տամ, ըրիօյնակեն տեղ լո̈ւս ա տամ, սերունութունը մարթու ջան ա էրում։ էլհա մին լոխճան մեծ օշափ քոն իլա̈ծ, մին պըռավու կոխկե։ Աժդահակը սպանում ա օշափեն նան պռավեն, էս ախճիգյը ո̈ւրա̈ն հետե յա յոր օնում։ Վեր պո̈ւրո̈ւմ ա էն չորս ըխճըկանը կոշտը, էս ըխճըկերքը մնամ ըն մաթ մնացած, վեր ստի կեղեցկութուն կա աշխարքումըս, բա էլ ո̈ւրա̈նք հինչացու յը՞՞ն։

Մհենդյ խոսինքյ չորս ա̈ժդա̈հաներան։ Ըստրանք սկսում ըն քյա̈նդիրավ էս սերուն ըխճըկորանցը տո̈ւս պիրիլը։

Հերթը հսնում ա հենգյինչի ըխճըկանը, վեր տո̈ւս կյա, էտ վերան։

Էս ախճիգյը օղում ա, վեր առաչ Աժդահակին տո̈ւս օնին, քանի վեր ո̈ւրա̈ն կյեղեցկոթունավը տարվելու յըն էտ չորս ա̈ժդա̈հեքյը։ Աժդահակեն էտ վերան տո̈ւս չըն ունեական։

Էս ախճիգյըն ասում ա. — Սիրելի Աժդահակ, ինձ վեր տո̈ւս օնին, յոր ըն ունեական փախչին, քյըեղ թողին ըստեղ, տու եք, տո̈ւս եք, ինձ էլ տո̈ւս կալ, եր կալ քյընանք։

Աժդահակը հվատում չի՛, ասում ա. — Տու տո̈ւս եք, ինձ իմ հնգյերունքըս տո̈ւս ըն ունեական։

Հենգյինչի ախճիգյըն ասում ա. — Սիրելի Աժդահակ, ինձ վեր տո̈ւս օնին, քյըեղ տո̈ւս չըն ունեական, յըես վեր տո̈ւս կյամ, ըստեղավ կըքյինա̈ս, ըռաշկետ մին տո̈ռն ա իննա̈կան, նի կը մննիս ընդեղ, մին կա̈լ ա իննա̈կան, էրկու վեչխար լծած, կամները քըշելիս, ջա̈հտ կանիս սիպտա̈կ վչխարեն յրան նստիս, վեր քյըեղ լո̈ւս աշխարհք հանե, թա̈ չէ, վեր ընղնիս սև վչխարեն յրա, քյըեղ հանելու յա սև երգյիր։

Ըխճըկանըն ասած էս խոսկերքը կադարվում ա։ Ըխճըկանը չորս ա̈ժդա̈հեքյը տո̈ւս ըն օնում, յոր օնում, փախչում, Աժդահակին թողում ըտեղ, վերեն մաչին։

Խոսինքյ Աժդահակին նեստա։ Էտ չորս ա̈ժդա̈հեքյը եր կալին էտ սերուն ըխճըկորանցը փախեն։

Աժդահակը մնաց էտ վերին մաչեն։ Քյինա̈ց րիդի վեցինչի օթաղը։ Էն օթաղումը էրկու վեխճար, մինը սև, մինը՝ սիպտա̈կ լծած կամնին, կալ ըն թակում։

Աժդահակը օղում ա, թա̈ սիպտա̈կ վխճարեն յրա նստե, ըո̈ւրդա̈ն ընգնում ա սևեն յրան։ Սևըն ընդրան տո̈ւս ա պո̈ւրո̈ւմ սև երգյիր։

Էտ սև երգյիրումը Աժդահակը քյինա̈մ ա մին պառավ կընգա տոն։ Ընդեղ ծրավում ա, ճո̈ւր ա օղում, պառավը քյընա̈մ ա կյուզո̈ւմ, պիրո̈ւմ տամ Աժդահակին, ընդրան հետե, վեր ճո̈ւր չի կար էտ ըշխարքումը։

Մին ճո̈ւր կար, մաչին մին գյուրզա̈ օխծ, վեր ժողովուրթը քանե հետե ճո̈ւր ա յոր օնում, մին մարթ ըն քիցում ըռեխը, ետնան ճո̈ւր յոր օնում։ Էս վախտը թաքավերեն ըխճըկանը հերթն ա ընո̈ւմ, վեր բեդմա ըռեխը քցին, ճո̈ւր յոր օնին։

Աժդահակը կյամ ա թաքավերեն ըխճըկանը հետե պադրաստած

տեսը-տենը օտում, ուրան գորդանը յոր օնում, լենքին պահում, ընգնում էտ ճիրին մաշին գյուրզին ըռեխը։ Գյուրզին կտորում ա ըտեղ, մին տասը սաջին փադու չանք թուփ անում։

Ըտրանա ետը քյինամ ա թաքավերեն կոշտը, ասում. — Ինձ լուս աշխարհք տուս կալ, ինձ մին նպատակ օնիմ։

Թաքավերն ասում ա. — Ցրես կարալ չըմ, մինակ մին պայման կա, թա կարիս անիս, տու տուս կկյաս լուս աշխարհքը։ Էտ պայմանն էն ա, վեր մեր էս երգյիրումը կա մին Ծովինար-ղուշ։ Նա մին էրգյան չինարու յրա պուն ա տիրալ, ճոտեր ըրալ, թառ իլալ։ Մին մեծ գյուրզա օխծ կա, միշտ կյամ ա էտ ղուշին ճոտերը օտում։ Էս տարե էլ վեր օտե, էլ Ծովինար-ղուշը մարթ չի տուս ուննական լուս աշխարհք։

Աժդահակը քյինամ ա, էտ օխծը սպանում, տասը սաջեն փադու չանք թուփ անըմ, ետնան չինարուն տակեն քոն ինում։

Ծովինար-ղուշը կյամ ա, վեր էտ մարթեն սպանե, ճոտերը թողում չին, ասում ըն. — Տա յա մրեզ ըզադալ։

Էտ ղուշը կյամ ա Աժդահակեն կոշտը։

Աժդահակը ասում ա. — Ինձ լուս աշխարք տուս կալ։

Ծովինար-ղուշը ռազի յա ինում։ Ասում ա. — Քյընա օխտը փութ վխճարու տիմակ պեր, օխտը տեգյ ճուր, մաշկես կապե, նստե մաշկես, հիշտեղ ծուվվամ-ծրկըլթամ, մին փութ տիմակ, մին տեգյ ճուր պերանըս կըքցիս, վեր կարիմ քյըեզ տուս պիրիմ լուս աշխարհք։ Վեր մին մրսխալ պակաս ինի, կարել չըմ տուս օնիմ։

Աժդահակը քյինամ ա թաքավերեն կոշտը վխճարու տիմակ օղում։

Թաքավերըն ասում ա. — Իմ վխճըրնես քեզ ղուրբան, քյինա, մրթոտե, ճուրն էլ հանե ընդեղ, վեր ըզադալ ըս, երկալ, հիշքան օղըմ ըս։

Աժդահակը քյընամ ա վխճըրնեն մրթոտում, ճուրն էլ յոր օնում, պիրում Ծովինար-ղուշեն մաշկը կապում, մաշին նստում։ Ղուշը հղե յա ընգնում, հղեցը կեսումը խրեգյ ա մնում, վեր տուս պիրի, վերշին մին տեգյ ճուր նան մին փութ տիմակը օղում ա քցի պերանը, մին տրմակ վեր ա ընգնում։ Աժդահակը ջահտ ա անում, ուրան վեննենը փափուկ մսան կտրում, քցում Ծովինար ղուշեն պերանը։ Ծովինարը կլոխ ա ընգնում, մին թահրալ տուս ա պուրում լուս աշխարհքը։ Լուզվեն տակեն պահում ա էտ մսեն թիքյան։ Ետնան տուս օնում, տընում Աժդահակին կտրած վետանը յրա, ուրան թեփուռան մինը պուք տամ, քսում, լիվանում ա։

Ծտնան Ծովինար-ղուշը ասում ա.— Ինք առ իմ թեփուտներաw էրկունը, ըշտեղ նեղըն ընգնիս ուրուր քըսի, յըես քըշտետ ըմ իննա-կան։

Աժդահակը ուրան քսան փուքանոց մհակը յոր ա օնում, էլհա հղե ինում։

Շատ ա քյինում, խրեգյ ա քյինում, մին էլ ա տեսնում ուրան դավաճան հընգյերունքը էն ըն հազարավեր ղորքավ ուրան էն հենգյ ղաշանդյ-սուրուն ըխճրկորցը փսակում, վեր տանին։ Աժդահակը ըտրանց լոխճին կտորում ա, էն լոխ վրեսկեն, հարըստոթունը յոր օնըմ, էտ ըխճրկերքը աղաղում, պերում ուրանց շենը։ Զորսին փը-սակում ա, հինգինշինն էլ ինքը յոր օնըմ, նհետը փըսակվըմ։

Ըտրանա ետը Աժդահակը բախտավեր կյանք ա քաշում։

Էն ասթխերավ լիքը երգյինքան իրեք խընձոր ա եր ընգնում. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ էս հաքյաթը լուա աշխարք քըցողին։